ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ
MISSION ARMENIA NGO

«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՀ-951
13.11.2025թ.

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի պաշտոնակատար
Ավետիս Առաքելյանին

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) 1988թ.-ից ՀՀ մարզերում և Երևան քաղաքում ներդրել և զարգացրել է համայնքահեն սոցիալ-առողջապահական ծառայությունների մատուցման տարբեր ենթակառույցներ (ցերեկային կենտրոններ, բարեգործական ճաշարաններ, սոցիալական տուն (առաջինը ՀՀ-ում) և այլն) ընդգրկող ընդհանրական մոդել, որը շահառուներին հնարավորություն է ընձեռում բազմաբնույթ սոցիալ-առողջապահական, իրավաբանական, հոգեբանական ծառայություններ ստանալ իրենց տներում, համայնքներում՝ չկտրվելով հարազատ միջավայրից, ապրելով արժանապատիվ, ինքնուրույն, անկախ և ակտիվ կյանքով:

Կազմակերպությունն իր շուրջ 36 ամյա աշխատանքային գործունեության ընթացքում համագործակցում է Կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ՝ փորձելով արձագանքել Հայաստանում խոցելի խմբերի կարիքներին:

Այդ կարիքները բավարարելու և համայնքում հասանելի ծառայություններ մատուցելու նպատակով 2001թ. Կազմակերպությունը համայնքային կենտրոն հիմնեց նաև Գյումրի քաղաքում: Ներկայումս գրասենյակը գտնվում է Երևանյան խճուղի 107/6 հասցեում, որտեղ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցությամբ, տրամադրվում են հետևյալ ծառայությունները՝

- ✓ Ցերեկային խնամքի ծառայություններ, այդ թվում՝ սոցիալական, հոգեբանական, առողջապահական, իրավաբանական, ժամանցի կազմակերպման, որոնք տրամադրվում են կենտրոն հաճախող ավելի քան 50 տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց
- ✓ Բարեգործական ճաշարան- ավելի քան 60 խոցելի անձ շաբաթական 5 օր ստանում է կալորիականությամբ հարուստ տաք սնունդ՝ հատուկ կազմված ճաշացանկով
- ✓ Տնային խնամքի ծառայություններ, այդ թվում՝ սոցիալ-հոգեբանական աջակցություն, կենցաղային սպասարկում և խնամք, բժշկական օգնության կազմակերպում, ուղեկցումներ տարբեր հաստատություններ, ազատ ժամանցի կազմակերպում, որոնք տրամադրվում են շուրջ 60 միայնակ տարեցների և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց:

Արձագանքելով 2023 թվականի Արցախի բռնի տեղահանությանը՝ Կազմակերպությունը տարատեսակ ծառայություններ (սոցիալ-հոգեբանական, իրավաբանական, հումանիտար աջակցության) է տրամադրում արցախցի մեր հայրենակիցներին՝ շուրջ 330 ընտանիքի (ավելի քան 1400 անձ): Կենտրոնն իրականացնում է նաև տարատեսակ ինտեգրման միջոցառումներ տեղացի և փախստական անձանց համար:

Հայաստան, Երեւան 0026, Նժդեհ 42
42 Nzhdeh, Yerevan 0026, Armenia
հեռ. (010) 444-792
Tel: (010) 444-792
էլ.փոստ. ngo.missionarmenia.org
E-mail: ngo.missionarmenia.org
URL: https://missionarmenia.org
URL: https://missionarmenia.org

Սույնով ևս մեկ անգամ շնորհակալություն եմ հայտնում Ձեզ՝ այս տարիների ընթացքում Կազմակերպության հետ սերտ համագործակցության համար:

Հաշվի առնելով մեր երկարամյա համագործակցությունը և տրամադրվող ծառայությունների շարունակականության ապահովման անհրաժեշտությունը՝ խնդրում եմ դիտարկել Կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված Երևանյան խճուղի 107/6 հասցեում գտնվող տարածքի պայմանագրի վերակնքման հնարավորությունը:

Գործող պայմանագրի ժամկետն ավարտվել է և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով սկսել է գործել անորոշ ժամկետով:

Հարգանքով՝
Երվանդ Մխիթարյան
«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ, նախագահ

Կատարող՝
Գ. Մաթոսյան,
Հեռ. ՝041716555
Իրավաբանական բաժնի ղեկավար